**Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Կոթիի Շահնազար Շահնազարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), մաթեմատիկայի (21 դասաժամ), շախմատի (5 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ), անգլերենի (20 դասաժամ), պատմության (11 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող, հավաստագրերի պատճենները/ դրանց առկայության դեպքում/:
6. Մեկ լուսանկար ՝ 3*4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ մայիսի 3-ից մինչև մայիսի 17-ը ներառյալ, ամեն օր՝ $9^{00}$-ից $15^{00}$-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի մայիսի 19-ին՝ ժամը $15^{00}$-ին**, ՀՀ Տավուշի մարզի Կոթիի Շահնազար Շահնազարյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /093775080/ հեռախոսահամարով: